

Ժողովուրդ

5
(2855)

23 հունվարի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com


100 դրամ

ԱԺ ՆԱԽԱԳԱՐԻ ԿԵՆՁ Freenews-Ը ԶԻ ՄԱՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ



«Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, որ ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանը պատժամիջոց է կիրառել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կնոջ հեռուստաընկերության՝ Freenews-ի նկատմամբ: Այս տեղեկությունների հետեւից գնալով «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Բարձր տեխնոլոգիաների եւ արդյունաբերության նախարարություն՝ հասկանալու համար, թե էլ որ հեռուստաընկերություններն են ենթարկվել պատժամիջոցների, եւ որոնք ունեն չվճարված պարտքեր: ԲՏԱ նախարարությունից մեզ պատասխանեցին, որ հունվարի 1-ի դրությամբ հանրային մուլտիպլեկսում հեռարձակվող հեռուստատեսություններից 3-ը կուտակել են ժամկետանց դեբիտորական պարտք. «Ա-Թիվի» ՍՊԸ-ն կուտակել է 32 մլն ՀՀ դրամ պարտք, «Ֆրիկուլ» ՍՊԸ-ն՝ 23,3 մլն ՀՀ դրամ, «Ֆորտունա» ՍՊԸ-ն՝ 5,4 մլն ՀՀ դրամ: «Հարկ ենք համարում Նշել, որ 2024 թվականի հունվարի 18-ի դրությամբ «Ա-Թիվի» ընկերությունը 32 մլն ՀՀ դրամ պարտքից մարել է 13,3 մլն ՀՀ դրամ գումարը: Ընկերությունը պարտքի մյուս մասը կմարի դատարանի սահմանած ժամանակացույցով: «Ֆրիկուլ» ընկերությունը 23,3 մլն ՀՀ դրամ պարտքից մարել է 1,5 մլն ՀՀ դրամ, պարտքի մնացորդն այս պահին կազմում է 21,8 մլն ՀՀ դրամ: «Ֆորտունա» ընկերությունն ամբողջությամբ մարել է պարտքը»:

Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Տիրան Խաչատրյանի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպի գործով մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ պաշտպանության նախարարի նախկին տեղակալ, գնդապետ Գարրի Սաֆարյանի որդուն՝ Ալսեն Սաֆարյանին: Հիշեցնենք, որ ԼՂՀ պաշտպանության նախարարի նախկին տեղակալ, գնդապետ Գարրի Սաֆարյանին եւ նրա տիկնոջը՝ Ռիտա Բաղդասարյանին, հրավիրել են Գլխավոր դատախազություն: Նրանք ծանուցագիր էին ստացել, որ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում իրենց պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր: Ծանուցագիրը ստանալու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, պետք է ներկայանալ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն՝ ծանոթանալու գործի նյութերին, ներկայացնելու դիրքորոշում, ինչպես նաեւ հայտարարագիր: Բանն այն է, որ «Վերածնունդ» ՍՊԸ-ն ներառված է եղել Ստեփանակերտում բարեկարգման աշխատանք իրականացնող ընկերությունների թվում. այն 2020թ.-ի դրությամբ 263 մլն 981 հազար դրամի աշխատանքներ է իրականացրել: Ընկերության 50.3 տոկոսը պատկանում է գնդապետ Գարրի Սաֆարյանին, 49.7 տոկոսը նրա կնոջը՝ Ռիտա Բաղդասարյանին: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների եւ փոխկապակցված անձանց հայտարարագրերում Սաֆարյան Գարրին եւ Բաղդասարյան Ռիտան 2013-2017 թվականներին, աշխատավարձից բացի, այլ եկամուտ չեն ներկայացրել: Թե ինչ գույքերի առնչվող հարցերով են նրանք հրավիրվել Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն, բաց աղբյուրում Նշված չէ:



Նախորդ տարվա վերջին Նիկոլ Փաշինյանը մեկնել էր Սանկտ Պետերբուրգ՝ մասնակցելու Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի Նիստին, իսկ դեկտեմբերի 26-ին՝ ԱՊՀ ոչ պաշտոնական գագաթնաժողովին: Դեռ դեկտեմբերի 25-ին ՌԴ նախագահի մամուլի խոսնակ Ռմիտորի Պետկովը հայտարարել էր, որ Պուտինն ու Փաշինյանը «հիանալի հնարավորություն կունենան շփվել համաժողովի ընթացքում եւ առաջիկա միջոցառումների շրջանակներում»: Այդպես էլ տեղեկություն չհաղորդվեց՝ կայացել է արդյոք երկկողմ հանդիպում Փաշինյանի եւ Պուտինի միջեւ, թե ոչ: «Ժողովուրդ» օրաթերթն այս տեղեկությունը ճշտելու համար դիմեց ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանին, որն ասաց, թե նման տեղեկություններ չկան: Մեր ճշտող հարցին, թե լուրեր կան, որ Պուտինը մերժել է Փաշինյանի՝ առանձնազրույցի առաջարկը, եղել է արդյոք առանձնազրույց, թե ոչ, Բաղդասարյանը ասաց. «Ավելացնելու ոչինչ չունենմ»: Իհարկե, մենք ոչ թե վարչապետի խոսնակի տեղեկացվածության մակարդակն էինք փորձում ճշտել, այլ երկու երկրների ղեկավարների առանձին հանդիպման մասին: Այդպես էլ, սակայն, ոչինչ չպարզվեց: Հիշեցնենք, որ Սանկտ Պետերբուրգում ԱՊՀ ոչ պաշտոնական գագաթնաժողովի շրջանակում ոչ պաշտոնական շփումներ էին տեղի ունեցել Փաշինյանի ու Ալիևի միջեւ:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը հունվարի 18-ին՝ հիկզաբթի օրը, գաղտնի այց է կատարել Վարդենիսի գիևկուրական հոսպիտալ, ինչը իրարանցում է առաջացրել բուժհաստատությունում: Հոսպիտալի տնօրինությունը, տեղեկանալով Փաշինյանի այցի մասին, հրահանգել է արագ կարգի բերել այն ու շտկել բոլոր անսարքությունները, որպեսզի Նիկոլ Փաշինյանին հանկարծ չբարկացնեն ու արժանաւան վերջերս պաշտոնանկ արված անձանց բախտին: Նշենք, որ արդեն տեսական ժամանակ է, ինչ տեղեկություններ են շրջանառվում Վարդենիսի հոսպիտալի փակման մասին: Ահա իր այս այցի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է հոսպիտալի տնօրինության հետ ու հանգստացրել նրանց, որ այն շարունակելու է գործել: Բերդի հոսպիտալի օրինակը «պիլոտային է», ու դեռ պարզ չէ, թե այն ինչ ընթացք կունենա մյուսների մասով:



ԱՐՑԱԽ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛ՐԿ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ, Արցախի նախագահ Մամվել Շահամանյանի որոշմամբ, օրեր առաջ ԱՀ նոր դեմոնստրացիա է նախատեսվել Բաղաբազարի մարզի նախագահ Արամ Մարգարյանը:

Մինչ այս ԱՀ պետնախարարի պաշտոնը զբաղեցնում էր Ադրբեյջանի կողմից ապօրինի կալանքի տակ պահվող, Արցախի նախկին նախագահ Արայիկ Չարոյանի հորեղբոր որդին՝ Արթուր Չարոյանը:

Ինչպես Արցախի մեր աղբյուրներն էին հայտնել, Արթուր Չարոյանը իր ցանկությամբ է ազատման դիմում գրել: Վերջինս այդ պաշտոնին նշանակվել էր նախորդ տարի՝ սեպտեմբերին:

ArmLur.am-ը այս առնչությամբ մի քանի հարց է ուղղել Արցախի ԱԺ «Ազատ հայրենիք-ԶՄԴ» խմբակցության պատգամավոր Արամ Չարոյանին:

«Պարոն Չարոյան, ինչու՞ Արցախի պետնախարարին փոխելու որոշում կայացվեց հենց այս պահին. տեղի՞նք՝ ինչ խմորումներ են գնում գործադիր մարմնում:

-Նախագահ Շահամանյանն այս մասին դեռ դեկտեմբերին խոսել էր, որ կառավարությունը շարունակելու է գործել հասարակական հիմունքներով. իմ ունեցած տեղեկություններով՝ պետնախարարն էլ հասարակական հիմունքներով է աշխատելու:

-Մեր տեղեկություններով՝ Արցախի արդեն նախկին պետնախարար Արթուր Չարոյանը իր դիմումի համաձայն է աշխատանքից ազատվել:



խատանքից ազատվել. Դուք ի՞նչ տեղեկություն ունեք, ի՞նչ խնդիրներ են եղել:

-Որքանով ես եմ տեղյակ, Արթուր Չարոյանի ամողջական խնդիրներն են եղել պատճառը, դրա համար է ազատման դիմում գրել:

-Պարոն Չարոյան, Արցախի պատգամավորներն այս ընթացքում ինչո՞վ են զբաղված, քննարկում, հանդիպում նախատեսում եք անցկացնել:

-Այս պահին մեր օրակարգում չկա նման բան:

Իսկ տեղահանված արցախցիների հետ հանդիպումներ կան, նրանց հետ ի՞նչ աշխատանք է տարվում:

-Աշխատանք տարվում է, բայց առավել համակարգված՝ կառավարության կողմից, իսկ պատգամավորներն ավելի շատ սեփական նախաձեռնությամբ են ինչ-որ քայլեր անում: Հստակ կանոնակարգված քայլեր պատգամավորների կողմից չկան, շատ պատգամավորներ իրենք իրենց նախաձեռնությամբ են հանդիպում ունենում տեղահանված արցախցիների հետ:

Հրույցը ՔՐԻՄՍԻԱ ՄՈՒՇԵՐՅԱՆԸ

ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԱԶԱՏՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քրեակատարողական ծառայությունը հերթական անգամ չկարողացավ ազատվել ծառայության պաշտոնյաներից մեկից: Այդ պաշտոնյան Վարդգես Ծաղիկյանն է: Վերջինս ԱՆ քրեակատարողական վարչության պետի տեղակալի պաշտոնին նշանակվել է 2018 թվականի հունիսի 15-ին՝ հեղափոխությունից հետո: Դրանից հետո համակարգի ոչ մի պետ չի կարողանում ազատվել նրանից, քանի որ նա Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավիսյանի մորաքրոջ տղան է, հետեւաբար արտոնյալ կարգավիճակում է գտնվում մյուս գործընկերների նկատմամբ: Ըստ 2022 թվականի հայտարարագրի՝ Ծաղիկյանը «Ն ԵՎ Ս ՔՈՆՍՏԻՏՈՒՅՈՒՄ» ՍՊԸ-ից բնակարան է գնել Երեւանում 24 մլն 176 հազար ՀՀ դրամ արժույթով, որը նույն թվականի սեպտեմբերին օտարվել է 24 մլն դրամով Արտյոմ Ադիսյանին: Տվյալ տարվա սկզբում առկա է եղել մեկ Nissan մակնիշի մեքենա, որը տարվա ընթացքում օտարվել է եւ, որպես նվիրատվություն, հանձնվել է Սկրտիչ հասցեատրանսպորտային, իսկ Սկրտիչ հասցեատրանսպորտային MERCEDES-BENZ մակնիշի մեքենան նվիրատվություն է արվել Ծաղիկյանին: Բանկային հաշիվների մնացորդները կազմում են 156 հազար դրամ եւ 16 հազար ԱՄՆ դոլար, կանխիկ դրամական միջոցները կազմում են 6 մլն 700 հազար դրամ եւ 18 հազար 300 ԱՄՆ դոլար:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանյան պատվիրակության կազմում Զաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ Նուրե Պետրոսյանը հունվարի 7-11-ն մեկնել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն Ավադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը նախագծող «Gerkan, Marg and Partners» ճարտարապետական ընկերության հրավերով:

Այդի նպատակն էր քննարկել Հայաստանում «Ավադեմիական քաղաք» հայեցակարգի իրագործման հետագա քայլերը, ծանոթանալ նմանատիպ նախագծերի իրագործման գերմանական փորձին եւ «Gerkan, Marg and Partners» ճարտարապետական ընկերության գործունեությանը:

Պատվիրակության անդամները եղել են Ադելտրոֆում գտնվող գիտահետազոտական-կրթական Նոր թաղամասում, ծանոթացել ստեղծված ելքային քաղաքային քարտեզին, կառավարման առանձնահատկություններին, իսկ Բեռլինի նախկին օդանավակայանի տարածքում կառուցվող Տեգել տեխնոլոգիական կենտրոն այցի շրջանակում ծանոթացել են տարածքի հեռանկարային օգտագործման տեսլականին, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման մոտեցումներին: Շրջայցեր են եղել նաեւ Մյունխենի տեխնիկական համալսարանի Գարիսիգի կամպուսում, «Gasteig HP8» մշակույթի կենտրոնում, Բեռլինի «Էյնշտեյն կենտրոնում»:

ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի ու «Մյունխենի տեխնիկական համալսարան-միջազգային» ՍՊԸ («TUM International GmbH») միջեւ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ «Ավադեմիական քաղաք» նախագծի շարունակական զարգացման համար համագործակցային կապերի հաստատման նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Հունգարիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Աշոտ Սմբատյանը հունվարի 19-ին հանդիպում է ունեցել Հունգարիայի նախագահի արտաքին հարաբերությունների հարցերով խորհրդական Քրիստոֆ Ալտուշի հետ:


Այս մասին հայտնում են Հունգարիայում Հայաստանի Հանրապետության դեսպանությունից:

Կողմերը մտքեր են փոխանակել Հայաստանի եւ Հունգարիայի միջեւ երկկողմ հարաբերությունների եւ համագործակցության խորացման հնարավոր ուղղությունների շուրջ:

ԱՐԶԱԿՈՒՐԳ՝ ԱՌԱՆՑ ՊԱՐԱՆՔԻ

ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում նախատեսվել են կարգավորումներ ամենամյա արձակուրդների ընթացակարգերի պահպանման առնչությամբ: Նոր փոփոխությունների համաձայն՝ արձակուրդային օրերը տարիներով չօգտագործելու հնարավորություն այլեւս չկա: Գործատուին տրվելու է լծակ աշխատողին արձակուրդ տրամադրել՝ առանց նրա դիմումի:

«Տարիներ շարունակ աշխատանքային օրենսգրքում ամրագրված էր նորմ, ըստ որի՝ եթե դու չես օգտագործում տվյալ տարվա ամենամյա արձակուրդը, ապա կարող ես տեղափոխել ամենամյա 18 ամիս եւ, այնուամենայնիվ, օգտագործես այն: Մենք իրականության մեջ տեսնում ենք, որ շատ հաճախ այդ պահանջը չէր պահպանվում: Լինում էր այնպես, որ աշխատողները տարիներով չէին գնում արձակուրդ, նույնիսկ 15, 20 տարով: Մենք ու-



սումնասիրեցինք իրավիճակը. գործատուները նշում էին, որ աշխատողները դիմում չեն գրել, իսկ աշխատողներն էլ ասում էին, թե ցանկացել են, սակայն գործատուները հնարավորություն չեն տվել: Մենք առաջարկեցինք փոփոխություն՝ լուծում գտնելու համար», - ԶԼՄ-ների հետ զրույցում նշեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի եւ զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանը:

Առաջարկվող լուծումը հետեւյալն է. 2023 թվականի դեկտեմբերի 1-ից հետո՝ յուրաքանչյուր աշխատողի աշխատանք-

քային տարվա սկսելուց հետո, աշխատողն ունի մեկ տարի իր ամենամյա արձակուրդն օգտագործելու համար: Եթե ինքը տվյալ տարվա իր ամենամյա արձակուրդը չօգտագործի, ապա իրավունք ունի մինչեւ 18 ամիս այն տեղափոխելու: Եթե դրանից հետո էլ չի օգտագործում իր արձակուրդը, դիմում չի գրում արձակուրդ գնալու համար, ապա գործատուին հնարավորություն է տրվում այլեւս առանց աշխատողի դիմումի նրան ուղարկել արձակուրդ: Սա նոր գործիք է լինելու տրված գործատուին, որ արդեն չսպասի աշխատողի դիմումին:

«Ամեն դեպքում, եթե գործատուն, ունենալով այդ իրավունքը, չիրացնի, այսինքն՝ աշխատողին առանց իր դիմումի չուղարկի արձակուրդ, ապա գործատուն տույժ է վճարելու աշխատողին յուրաքանչյուր չտրամադրված օրվա համար միջին ամսական աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան միջին ամսական աշխատավարձի չափը: Այս փոփոխությունները նպատակ ունեն, որ առնվազն 2026 թվականին եւ դրանից հետո աշխատողների մոտ չլինեն արձակուրդային կուտակված օրեր», - ասաց Ժորա Սարգսյանը:

Այս կարգավորումը չի վերաբերում 2023 թվականի դեկտեմբերի 1-ից առաջ կուտակված արձակուրդներին: Այս փոփոխությունը վերաբերում է 2023 թվականի դեկտեմբերի 1-ից հետո սկսվող աշխատանքային տարիներին: Մինչ այդ կուտակված ամենամյա արձակուրդները կշարունակվեն պահպանվել, կհամարվեն կուտակված, եւ աշխատողները կամ ընթացքում կկարողանան օգտագործել ընթացիկ ամենամյա արձակուրդներին զուգահեռ, կամ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում կտրվի վերջնահաշվարկ:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր ունեն հաճախորդական կենսաթոշակի իրավունք:
Անիտա Զիլավյան
 (37 տարեկան, տնային տնտեսուհի)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Զիլավյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն այն անձինք, որոնք հաշմանդամ են դարձել՝

- 1) աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով՝ անկախ աշխատանքային ստաժից,
 - 2) ընդհանուր հիվանդության, մանկուց հիվանդության, բնական, տեխնածին եւ այլ աղետների հետևանքով, եթե հաշմանդամություն սահմանելու ժամանակ ունեցել են հետեւյալ աշխատանքային ստաժը՝ (տարիքային խումբը/աշխատանքային ստաժը՝ օրացուցային տարիներով)
- մինչև 23 2 տարի
 - 23-ից մինչև 26 3 տարի
 - 26-ից մինչև 29 4 տարի
 - 29-ից մինչև 32 5 տարի
 - 32-ից մինչև 35 6 տարի
 - 35-ից մինչև 38 7 տարի
 - 38-ից մինչև 41 8 տարի
 - 41-ից մինչև 44 9 տարի
 - 44-ից բարձր 10 տարի

Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեցող հաշմանդամներին նշանակվում է հաշմանդամության նպաստ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը մինչև կենսաթոշակառուի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը նրա ցանկությանը փոխում է կենսաթոշակի տեսակը: Տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության կամ մասնակի կենսաթոշակի փոխարեն, անկախ կենսաթոշակառուի դիմումից՝ նշանակվում է տարիքային կենսաթոշակ, իսկ հաշմանդամության կենսաթոշակ կամ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու կամ այդ իրավունքը ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի տեսակը փոխվում է՝ կենսաթոշակառուի գրավոր դիմումի համաձայն:

ԿՐԹՎԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞վքեր կարող են օգտվել ուսման վարձի գեղջից նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում:
Լաուրա Ասլանյան (50 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ուսումնական հաստատությունը կարող է վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսին, հաշվի առնելով ուսանողի սոցիալական վիճակը եւ բարձր առաջադիմության արդյունքները, իր միջոցների հաշվին մասնակի փոխհատուցել ուսման վճարը՝

- 1) սոցիալապես անապահով ուսանողներին,
- 2) միակողմանի ծնողազուրկ ուսանողներին,
- 3) 3 եւ ավելի անչափահաս կամ 3 եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,
- 4) վճարովի ուսուցման համակարգում երկու եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,
- 5) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին,
- 6) հեռավոր լեռնային եւ սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին,
- 7) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին,
- 8) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ուսումնական հաստատության հայեցողությամբ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Նորվեգիայում գեղարվեստական մարմնամարզության միջազգային մրցումների ժամանակ հայ մարմնամարզուհի Աննա Բադալյանը 3 ոսկե մեդալ է նվաճել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
 Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուկ» ՓԲԸ
 հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
 հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
 հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 3 - 5 + 1 + 5	Արարատ	0 + 2 + 3 + 5
Կոտայքի լեռներ	- 3 - 6 - 2 - 4	Արմավիր	- 1 - 3 + 2 + 4
Կոտայքի նախալեռներ	0 + 3 - 1 + 1	Վայոց ձորի լեռներ	- 6 - 9 - 1 - 4
Գեղարքունիք	- 3 - 5 - 1 - 4	Վայոց ձորի նախալեռներ	- 2 - 4 + 2 + 4
Լոռի	- 8 - 13 - 2 - 4	Սյունիքի հովիտներ	- 2 - 4 + 1 + 3
Տավուշ	- 2 - 5 0 + 4	Սյունիքի նախալեռներ	- 6 - 9 - 1 - 3
Արագածոտնի լեռներ	- 0 - 3 - 1 + 1	ԼՂՀ	- 4 - 8 - 1 - 2
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 3 0 + 3	Երեւան	- 6 - 8 + 3 + 5

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
 տրված է 24.11.2010
 Ստորագրված է տպագրության 22.1.2024

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
 խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: